ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Ստելլա Մկրտչյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2025թ. հուլիսի 14-ից 18-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կառավարության պարտքի կառավարման կատարողականի գնահատում (Government Debt Management Performance Assessment (DeMPA))» թեմայով աշխատաժողովին

5. Քննարկված թեմաները.

1) Ծանոթություն պարտքի կառավարման կատարողականի գնահատման (DeMPA) հետ
2) Կառավարում և պարտքի ռազմավարություն (իրավական դաշտ և կառավարման կառուցվածք)
3) Կառավարում և պարտքի ռազմավարություն (պարտքի կառավարման ռազմավարություն)
4) Կառավարում և ռազմավարության զարգացում (պարտքի հաշվետվողականություն և աուդիտ)
5) Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հետ կոորդինացում
6) Փոխառություն և դրան առնչվող ֆինանսական գործունեություն
7) Կանխիկ հոսքերի կառավարում
8) Պարտքի գրանցում, սպասարկում և գործառնական ռիսկերի կառավարում
9) Պարտքի կառավարման կատարողականի գնահատման (DeMPA) գործընթաց
10) Պայմանական պարտավորությունների կառավարում

11) Բարեփոխումների ծրագրերի նախագծում և իրականացում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովին ներկա են գտնվել 8 երկրների 25 մասնակիցներ: Աշխատաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Համաշխարհային բանկի ներկայացուցիչների կողմից մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնց առաջադրվել է կատարել ենթադրյալ երկրի պարտքի կառավարման կատարողականի գնահատում (DeMPA): Աշխատաժողովի ընթացքում յուրաքանչյուր երկրից մեկ կամ մի քանի մասնակիցներ ներկայացրել են DeMPA չափորոշիչներից մեկի վերաբերյալ շնորհանդես՝ իրենց երկրի օրինակով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մշտապես բարելավել պարտքի կառավարման ոլորտին առչվող գործընթացները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գործուղվող՝

ՀՀ ֆինանսների նախարարության
պետական պարտքի կառավարման
վարչության հաշվառման և սպասարկման
բաժնի պետ

Ստելլա Մկրտչյան
22.07.2025թ.